

«Կոր Ինվեսք» ՓԲԸ

Ֆինանսական հաշվետվություններ

2017թ. փետրվարի 3-ից (հիմնադրման ամսաթիվ)

2017թ. դեկտեմբերի 31-ն ընկած

Ժամանակաշրջանի համար

Բովանդակություն

Անկախ առդիտորական եզրակացություն	3
Ծահույրի կամ վճասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն	6
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	7
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն	8
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն	9
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ.....	10



«ՔԵ-ՓԻ-ԷՄ-ԶԻ Արմենիա» ՓԲԸ
Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010,
Վ.Սարգսյանի փ. 26/1,
«Էրեբունի Պլազմա» Բիզնես-կենտրոն, 8-րդ հարկ
Հեռախոս + 374 (10) 566 762
Ֆաքս + 374 (10) 566 762
Ինտերնետ www.kpmg.am

Անկախ առողիտորական եզրակացություն

«Կուր Ինվեսթ» ՓԲԸ-ի Բաժնետերերին

Կարծիք

Մենք իրականացրել ենք «Կուր Ինվեսթ» ՓԲԸ-ի (Ընկերություն) ֆինանսական հաշվետվությունների առողիտը, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, 2017թ. փետրվարի 3-ից (հիմնադրման ամսաթիվ) 2017թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակաշրջանի շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ծանոթագրությունները, որոնք ներառում են հաշվապահական հաշվառման քաղաքանության հիմնական դրույթները և այլ բացարձական տեղեկատվություն:

Մեր կարծիքով, կից ներկայացվող ֆինանսական հաշվետվությունները, բոլոր էական առումներով, ճշնարիտ են ներկայացնում Ընկերության ֆինանսական վիճակը 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև վերջինիս գործունեության արդյունքները և դրամական միջոցների հոսքերը 2017թ. փետրվարի 3-ից (հիմնադրման ամսաթիվ) 2017թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակաշրջանի համար՝ ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՍՍ) համաձայն:

Կարծիքի արտահայտման հիմքեր

Մենք առողիտն իրականացրել ենք Առողիտի միջազգային ստանդարտներին (ԱՍՍ) համապատասխան: Նշված ստանդարտներով նախատեսված մեր պարտականությունները ներկայացված են մեր եզրակացության «Առողիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների առողիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Ընկերությունից համաձայն Հաշվապահների եթևայի միջազգային ստանդարտների խորհրդի Պրոֆեսիոնալ հաշվապահների եթևայի օրենսգրքի (ՀԵՍՍի օրենսգրքը) և Հայաստանի Հանրապետությունում ֆինանսական հաշվետվությունների առողիտի նկատմամբ կիրառելի եթևայի պահանջների, և մենք կատարել ենք եթևայի վերաբերող մեր այլ պարտականություններն այս պահանջներին և ՀԵՍՍի օրենսգրքին համապատասխան: Մենք գտնում ենք, որ ճեռք բերված առողիտորական ապացույցները բավականաչափ են և համապատասխան՝ մեր առողիտորական եզրակացության հիմք հանդիսանալու համար:

Ղեկավարությամ և կառավարման օրականերում ներգրավված անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ֆՀՍՍ համաձայն ֆինանսական հաշվետվությունների կազմնան և ճշնարիտ ներկայացման, ինչպես նաև այնպիսի ներքին վերահսկողության համակարգի համար, որը համարում է անհրաժեշտ սխալի կամ խարդախության արդյունքում առաջացող էական խեղաթյուրումներից գերծ ֆինանսական հաշվետվություններ պատրաստելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պետք է իրականացնի Ընկերության անընդհատ գործելու կարողության գնահատում, բացահայտելով, կիրառելի լինելու դեպքում, անընդհատությամբ վերաբերող հարցերը և կիրառելով անընդհատության հիմնաքառվ հաշվառմը, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը նշատիր է կամ լուծարել Ընկերությունը կամ դադարեցնել վերջինիս գործունեությունը, կամ չունի դրանից խուսափելու իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում ներգրավված անձիք պատասխանատու են վերահսկել Ընկերության ֆինանսական հաշվետվությունների պատրաստման գործընթացը:

Առողջութիւնի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների առողջութիւնը

Սեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ երաշխիք առ այն, որ ֆինանսական հաշվետվություններն, ամբողջությամբ վերցված, զերծ են սխալի կամ խարդախության պատճառով առաջացած էական խեղաթյուրումներից և ներկայացնել մեր կարծիքը ներառող առողջութական եզրակացություն: Ողջամիտ երաշխիքը հավաստիացման բարձր աստիճան է, սակայն այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ների համաձայն առողջութիւնի իրականացման ընթացքում միշտ հնարավոր կլինի հայտնաբերել էական խեղաթյուրումը՝ վերջնիս առկայության դեպքում: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի հետևանքով և համարվում են էական, եթե կարելի է պատճառաբանված կերպով ակնկալել, որ, առանձին կամ միասին վերցված, ազդեցություն կունենան այս ֆինանսական հաշվետվությունների հիման վրա օգտագործողների կողմից կայացվող տնտեսական որոշումների վրա:

Որպես ԱՄՍ-ների համաձայն իրականացվող առողջութիւն մաս՝ մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական թերահավատություն առողջութիւն ընթացքում: Մենք նաև՝

- հայտնաբերում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, մշակում և իրականացնում ենք այդ ռիսկերին անդրադառն առողջութական ընթացակարգեր և ձեռք ենք բերում առողջութական ապացույցներ, որոնք բավականաչափ են և համապատասխան մեր առողջութական եզրակացության հիմք համարիչներում չհայտնաբերելու ռիսկն ավելի մեծ է քան սխալի հետևանքով առաջացած էական խեղաթյուրումը չհայտնաբերելու ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել գաղտնի համաձայնություն, կեղծիք, միտունմավոր բացթողումներ, խեղաթյուրումներ կամ ներքին վերահսկողության համակարգի շրջանցում:
- պատկերացում ենք կազմում առողջութիւն ներքին վերաբերող ներքին վերահսկողության համակարգի վերաբերյալ՝ տվյալ հանգամանքներում տեղին առողջութական ընացակարգեր մշակելու, բայց ոչ Ընկերության ներքին վերահսկողության համակարգի արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու նպատակով:
- գնահատում ենք կիրառվող հաշվապահական հաշվառման քաղաքականության տեղին լինելը և դեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և հարակից բացահայտումների հիմնավորվածությունը:
- կատարում ենք եզրահանգում դեկավարության կողմից անընդհատության հիմունքով հաշվառման կիրառելու տեղին լինելու վերաբերյալ և, հիմք ընդունելով ձեռք բերված առողջութական ապացույցները, կատարում ենք հետևողություն, թե արդյոք առկա է դեպքերի կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է լուրջ կասկածներ հարուցել Ընկերության անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրակացնենք, որ գոյություն ունի էական անորոշություն, մենք պետք է մեր առողջութական եզրակացությունում ուշադրություն հրավիրենք ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, այդ բացահայտումների ոչ համապատասխան լինելու դեպքում ձևափոխենք մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր առողջութական եզրակացության ամսաթիվը ձեռք բերված առողջութական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա դեպքերը կամ հանգամանքները կարող են հանգեցնել Ընկերության կողմից անընդհատության հիմունքով գործունեության իրականացման դադարեցմանը:



«Կուբ Ինվեսթ» ՓԲԸ
Անկախ առևտիտորական եզրակացություն
Էջ 3

- գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները և գնահատում ենք, թե արդյոք ֆինանսական հաշվետվություններն արտացոլում են իրենց իիմքում ընկած գործառնություններն ու իրադարձությունները այնպիսի ձևով, որը թույլ է տալիս ապահովել ճշմարիտ ներկայացում:

Ի թիվս այլ հարցերի, մենք տեղեկացնում ենք կառավարման օղակներում ներգրավված անձանց առևտիտի պլանավորված շրջանակների և ժամկետների, առևտիտի ընթացքում առաջացած նշանակալից հարցերի, այդ թվում առևտիտի ընթացքում հայտնաբերված ներքին վերահսկողության համակարգի եական թերությունների մասին:

Այս անկախ առևտիտորական եզրակացության ներկայացման համար իիմք հանդիսացող առևտիտի իրականացման համար պատասխանատու գործընկերն է՝

Տիգրան Գասպարյան
Ղեկավար գործընկեր, «Քեյ-Փի-Էն-Ֆին Արմենիա» ՓԲԸ-ի նախօրեն

«Քեյ-Փի-Էն-Ֆին Արմենիա» ՓԲԸ
7 մայիս 2018թ.



«Կոմ Ինվեստ» ՓԲԸ

Հահույթի կամ վճասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվորյուն
2017թ. փետրվարի 3-ից (իհմնադրման ամսաթիվ) 2017թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակաշրջանի համար

Ծնրգ.	հազ. դրամ	2017թ. փետրվարի 3-ից (իհմնադրման ամսաթիվ)	2017թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակաշրջան
Տոկոսային եկամուտ	4	362,670	
Տոկոսային ծախս	4	(176,836)	
Չուտ տոկոսային եկամուտ		185,834	
Միջնորդակարների և այլ վճարների տեսքով ծախս		(431)	
Չուտ օգուտ շահույթի կամ վճասի միջոցով իրական արժեքով շափող ֆինանսական գործիքներից	5	145,514	
Գործառնական եկամուտ		330,917	
Անձնակազմի գծով ծախսեր		(8,021)	
Այլ ընդհանուր վարչական ծախսեր	6	(11,709)	
Հահույթ նախքան շահուրահարկով հարկումը		311,187	
Հահուրահարկի գծով ծախս	7	(62,467)	
Հահույթ 2017թ. փետրվարի 3-ից (իհմնադրման ամսաթիվ)			
2017թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակաշրջանի համար		248,720	
Ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունք			
2017թ. փետրվարի 3-ից (իհմնադրման ամսաթիվ)			
2017թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակաշրջանի համար		248,720	

6-ից 39-րդ էջերում ներկայացված ֆինանսական հաշվետվորյունները հաստատվել են
դեկապարության կողմից 2018թ. մայիսի 7-ին և ստորագրվել են վերջինիս անունից:

Արեն Սիմոնյան
Գործադիր տնօրին



Արգամ Արքահամյան
Գլխավոր հաշվապահ
«Էջ-Էն Առողիտ» ՓԲԸ-ի ներկայացուցիչ

«Կոր Ինվեստ» ՓԲԸ
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն
2017թ. դեկտեմբերի 31-ի դրույթամբ

ԱԿՏԻՎՆԵՐ	31 դեկտեմբերի 2017թ.
	Ծնր. հազ. դրամ
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	8 19,301
Ծահույթի կամ վճարի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ	
- Ընկերության կողմից պահպող	9 105,269
- Վաճառքի և հետզննան պայմանագրերի դիմաց գրավադրված	9 1,528,636
Տրամադրված փոխառություններ	10 323,300
Մինչև մարման ժամկետը պահպող ներդրումներ	
- Ընկերության կողմից պահպող	11 417,593
- Վաճառքի և հետզննան պայմանագրերի դիմաց գրավադրված	11 1,687,154
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	12 2,136
Ընդամենը ակտիվներ	4,083,389
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	
Ֆինանսական կազմակերպություններին վճարվելիք գումարներ	13 3,171,577
Ընթացիկ հարկային պարտավորություն	42,013
Հետաձգված հարկային պարտավորություններ	7 20,454
Այլ պարտավորություններ	625
Ընդամենը պարտավորություններ	3,234,669
ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ	
Բաժնետիրական կապիտալ	14 600,000
Չբաշխված շահույթ	248,720
Ընդամենը սեփական կապիտալ	848,720
Ընդամենը պարտավորություններ և սեփական կապիտալ	4,083,389

«Կուր Ինվես» ՓԲԸ

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվորյուն
2017թ. փետրվարի 3-ից (իհմնադրման ամսաթիվ) 2017թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակաշրջանի համար

2017թ. փետրվարի 3-ից

(իհմնադրման ամսաթիվ)

2017թ. դեկտեմբերի 31-ն ընկած
ժամանակաշրջան

Ծնթաց.

հազ. դրամ

ԴՐԱՄԱԿԱՆ ՍԻԶՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐ ԳՈՐԾԱՌԱԿԱՆ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ

Ստացված տոկոսներ	294,210
Վճարված տոկոսներ	(172,582)
Վճարված միջնորդագնարներ և այլ վճարներ	(431)
Չուտ վճարումներ շահույթի կամ վճարի միջոցով իրական արժեքով շափող ֆինանսական գործիքների գծով	(1,459,938)
Այլ ընդհանուր վարչական ծախսերի գծով վճարումներ	(18,529)

Գործառնական պարտավորությունների աճ

Հետզմնան պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ	3,167,323
Այլ պարտավորություններ	35
Գործառնական գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ՝ նախքան շահութահարկի վճարումը	1,810,088
Գործառնական գործունեությունից ստացված դրամական միջոցների հոսքեր	1,810,088

ԴՐԱՄԱԿԱՆ ՍԻԶՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ

Մինչև մարման ժամկետը պահպան ներդրումների ձեռքբերում	(2,064,740)
Տրամադրված փոխառություններ	(323,300)
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում	(2,747)
Ներդրումային գործունեության համար օգտագործված դրամական միջոցների հոսքեր	(2,390,787)

ԴՐԱՄԱԿԱՆ ՍԻԶՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ

Սուտքեր բաժնետիրական կապիտալի թողարկումից	600,000
Ֆինանսավորման գործունեությունից ստացված դրամական միջոցների հոսքեր	600,000

Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ

Դրամական միջոցները և դրանց համարժեքները 2017թ. փետրվարի 3-ի դրությամբ	19,301
Դրամական միջոցները և դրանց համարժեքները	
2017թ. փետրվարի 3-ից (իհմնադրման ամսաթիվ)	
2017թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակաշրջանի վերջի դրությամբ	8

19,301

8

«Կոր Ինվեստ» ՓԲԸ

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվորյուն
2017թ. փետրվարի 3-ից (հիմնադրման ամսաթիվ) 2017թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակաշրջանի համար

հազ. դրամ	Բաժնետիրական կապիտալ	Չբաշխված շահույթ	Ընդամենը սեփական կապիտալ
Մնացորդ 2017թ. փետրվարի 3-ի դրությամբ	-	-	-
Ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունք			
Հահույթ 2017թ. փետրվարի 3-ից (հիմնադրման ամսաթիվ) 2017թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակաշրջանի համար		248,720	248,720
Ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունք 2017թ. փետրվարի 3-ից (հիմնադրման ամսաթիվ) 2017թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակաշրջանի համար		248,720	248,720
Ուղարկեած սեփական կապիտալում գրանցված գործառնություններ սեփականատերերի հետ			
Թողարկված բաժնետոմսեր	600,000	-	600,000
Ընդամենը գործառնություններ սեփականատերերի հետ	600,000	-	600,000
Մնացորդ 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	600,000	248,720	848,720

1 Ներածություն

(ա) Կազմակերպչական կառուցվածքը և հիմնական գործունեությունը

«Կուր Ինվեսթ» ՓԲԸ-ն (Ընկերություն) հիմնադրվել է 2017թ. փետրվարի 3-ին Հայաստանի Հանրապետությունում որպես փակ բաժնետիրական ընկերություն: Ընկերությունը ստացել է Ներդրումային ծառայությունների լիցենզիա Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկից 2017թ. փետրվարի 3-ին: Ընկերության հիմնական գործունեությունն իր հաշվին և իր անունից արժեթղթերով գործարքների իրականացումն է: Ընկերության գործունեությունը կարգավորվում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի (ՀՀ ԿԲ) կողմից:

Ընկերության իրավաբանական հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, Երևան 0002, Արամի փ. 64, գրասենյակ 143:

Ընկերության հավասար մասնաբաժնով սեփականատերերն են հանդիսանում Արմեն Տեր-Հակոբյանը և Արմինե Նաջարյանը, ովքեր հանդիսանում են նաև Ընկերության վերջնական վերահսկող անձիք: Կապակցված կողմերի հետ գործարքների նանրամասները ներկայացված են ժամորագրություն 18-ում:

(բ) Հայաստանի գործարար միջավայրը

Ընկերությունն իր գործունեությունն իրականացնում է Հայաստանում: Հետևաբար, Ընկերության գործունեության վրա ազդեցություն են ունենում Հայաստանի տնտեսությունը և ֆինանսական շուկաները, որոնց ընորոշ են զարգացող շուկայի հատկանիշները: Իրավական, հարկային և օրենսդրական համակարգերը շարունակվում են զարգանալ, սակայն ենթակա են տարբեր մեկնաբանությունների և հաճախակի փոփոխությունների, ինչը, այլ իրավական ու ֆինանսական խոչընդուների հետ մեկտեղ, լրացուցիչ բարդություններ է ստեղծում Հայաստանում գործող կազմակերպությունների համար:

Ֆինանսական հաշվետվություններն արտացոլում են դեկավարության գնահատականը Ընկերության գործունեության և ֆինանսական վիճակի վրա գործարար միջավայրի ազդեցության վերաբերյալ: Ապագա գործարար միջավայրը կարող է տարբերվել դեկավարության գնահատականից:

2 Պատրաստման հիմունքներ

(ա) Համապատասխանության մասին հայտարարություն

Կին ներկայացվող ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների («ՖՀՍՍ») պահանջների համաձայն:

(բ) Զարման հիմունքները

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբանական արժեքի հիմունքով, բացառությամբ շահույթի կամ վճարի միջոցով իրական արժեքով չափող ֆինանսական գործիքների, որոնք հաշվառվում են իրական արժեքով:

(գ) Ֆունկցիոնալ և ներկայացման արժույթ

Ընկերության ֆունկցիոնալ արժույթը ՀՀ դրամն է («դրամ»), որը, լինելով Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը, արտացոլում է Ընկերության գործունեության հիմքում ընկած իրադարձությունների և հանգանաճների տնտեսական էությունը:

Դրամը հանդիսանում է նաև այս ֆինանսական հաշվետվորումների ներկայացման արժույթը:

Ֆինանսական տեղեկատվությունը ներկայացված է դրամով՝ հազարների ճշտությամբ:

(դ) Գնահատումների և դատողությունների օգտագործում

Այս ֆինանսական հաշվետվորումները ՖՀՍՍ-ների պահանջներին համապատասխան պատրաստելու համար դեկավարությունը կատարել է մի շարք դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ, որոնք ազդեցություն ունեն հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման, ինչպես նաև ակտիվների, պարտավորությունների, եկամտի և ծախսի գծով ներկայացված գումարների վրա: Փաստացի արդյունքները կարող են տարրերվել այդ գնահատումներից:

Գնահատումները և համապատասխան ենթադրությունները շարունակաբար վերանայվում են: Հաշվապահական գնահատումների վերանայումները ճանաչվում են այն ժամանակաշրջանում, որում վերանայվել են և այն ապագա ժամանակաշրջաններում, որոնց վրա կարող են ազդեցություն ունենալ:

Հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման ժամանակ էական անորոշ գնահատումների և կարևոր դատողությունների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է ծանոթագրություն 19-ում ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքի գնահատման հետ կապված:

(ե) Հաշվապահական հաշվառման քաղաքականության և ներկայացման փոփոխություններ

Ընկերությունը կիրառել է ստորև ներկայացվող ստանդարտների փոփոխությունները՝ 1 հունվարի 2017թ. սկզբնական կիրառման ամսաթվով:

- Քացահայտման պահանջների վերանայում (ՀՀՍՍ 7-ի փոփոխություններ). ՀՀՍՍ 7 «Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվորում» ստանդարտը փոփոխվել է ՀՀՍՍԽ-ի պետքի լայնածավալ նախագծի շրջանակներում՝ ֆինանսական հաշվետվորումներում տեղեկատվության ներկայացումը և քացահայտումը կատարելագործելու նպատակով: Փոփոխությունը պահանջում է այնպիսի քացահայտումներ, որոնք հնարավորություն կտան ֆինանսական հաշվետվորումների օգտագործողներին գնահատել ֆինանսական գործունեության արդյունքում առաջացող պարտավորությունների փոփոխությունները, ներառյալ՝ դրամական միջոցների հոսքերով պայմանավորված և դրամական միջոցների հոսքերով չպայմանավորված փոփոխությունները: Քացահայտման այս նոր պահանջի քավարարման միջոցներից մեկը ֆինանսական գործունեության արդյունքում առաջացող պարտավորությունների ժամանակաշրջանի սկզբի և ժամանակաշրջանի վերջի դրությամբ մնացորդների համարման ներկայացումն է: Այնուամենայնիվ, փոփոխության նպատակը կարելի է ապահովել նաև այլ եղանակներով:

- Հետաձգված հարկային ակտիվների ճանաչում շիրացված վճարի գծով (ՀՀՍՍ 12-ի փոփոխություններ). ՀՀՍՍ 12-ի «Շահութահարկ» ստանդարտի փոփոխությունները պարզաբանում են, որ նվազեցվող ժամանակավոր տարբերության առկայությունը կախված է միայն հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ ակտիվի հաշվեկշռային արժեքի և դրա հարկման բազայի համեմատությունից և կախված չէ հաշվեկշռային արժեքի ապագա հնարավոր փոփոխություններից կամ ակտիվի փոխհատուցման ակնկալվող եղանակից: Այդ իսկ պատճառով, եթե առջնորդվենք այն ենթադրությամբ, որ հարկման բազան իրենից ներկայացնում է պարտքային գործիքի սկզբնական արժեքը, ապա գոյություն ունի ժամանակավոր տարբերություն: Փոփոխությունները ցույց են տալիս, որ կազմակերպությունը կարող է ճանաչել հետաձգված հարկային ակտիվ, եթե ակնկալվում է ապագա հարկային վճար՝ որոշակի պայմաններ ապահովելու դեպքում:

3 Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

Ստորև ներկայացվող հաշվապահական հաշվառման քաղաքականությունը հետևողականորեն կիրառվել է այս ֆինանսական հաշվետվորյումներում ներկայացված բոլոր ժամանակաշրջանների համար:

(ա) Արտարժույթով գործարքներ

Արտարժույթով իրականացված գործարքները փոխարկվում են Ընկերության ֆունկցիոնալ արժույթի գործարքի օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով:

Հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով արտահայտված դրամային ակտիվները և պարտավորությունները վերափոխարկվում են ֆունկցիոնալ արժույթի այդ օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով: Դրամային հորդածների գծով արտարժույթով իրականացված գործառնություններից առաջացած օգուտը կամ վճար իրենից ներկայացնում է ժամանակաշրջանի սկզբում ֆունկցիոնալ արժույթով արտահայտված, արդյունավետ տոկոսադրույթի և ժամանակաշրջանի վճարումների ճշգրտումով ամորտիզացված արժեքի և հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ գործող փոխարժեքով փոխարժեքով փոխարկված ֆունկցիոնալ արժույթով արտահայտված ամորտիզացված արժեքի միջև տարբերությունը:

Արտարժույթով արտահայտված ոչ դրամային ակտիվները և պարտավորությունները, որոնք չափվում են իրական արժեքով, վերափոխարկվում են ֆունկցիոնալ արժույթի իրական արժեքի որոշման ամսաթվի դրությամբ սահմանված փոխարժեքով: Սկզբնական արժեքով չափվող, արտարժույթով արտահայտված ոչ դրամային ակտիվները և պարտավորությունները փոխարկվում են ֆունկցիոնալ արժույթի գործարքի օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով:

Վերափոխարկման արդյունքում առաջացող արտարժության տարբերությունները ճանաչվում են շահույթում կամ վճարում, բացառությամբ վաճառքի համար նատչելի բաժնային գործիքների վերափոխարկման արդյունքում առաջացող տարբերությունների, բացի այն դեպքերից, երբ տարբերությունն առաջանում է արժեգրկման պատճառով, որի դեպքում այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված արտարժության տարբերությունները վերադասակարգվում են որպես շահույթ կամ վճար, ինչպես նաև ֆինանսական պարտավորությունների, որոնք արտացոլված են որպես արտերկրյա գործառնություններում ներդրումների հեջափորում կամ հեջափորման պահանջներին համապատասխանող դրամական միջոցների հոսքերի, այն դեպքում, եթե հեջափորումը հանդիսանում է արդյունավետ, որոնք ճանաչվում են այլ համապարփակ ֆինանսական արդյունքում:

(ը) Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ են համարվում բանկային հաշիվները։ Դրամական միջոցները և դրանց համարժեքները հաշվառվում են ամորտիզացված արժեքով ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում։

(գ) Ֆինանսական գործիքներ

(ի) Դասակարգում

Հայույթի կամ վճասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներն իրենցից ներկայացնում են ֆինանսական ակտիվներ և պարտավորություններ, որոնք՝

- հիմնականում ձեռք են բերվել կամ առաջացել են մոտ ապագայում վաճառելու կամ հետ գնելու նպատակով,
- կազմում են միասին կառավարվող որոշված ֆինանսական գործիքների պորտֆելի մաս, որի համար առկա է վկայություն կարծ ժամկետում շահույթ ստանալու մոտ անցյալու տեղի ունեցած փաստացի դեպքերի վերաբերյալ,
- հանդիսանում են ածանցյալ ֆինանսական գործիք (բացառությամբ ֆինանսական երաշխավորության պայմանագիր հանդիսացող ածանցյալ գործիքի կամ այն ածանցյալ գործիքի, որը նախատեսված է և հանդիսանում է արդյունավետ հեջավորման գործիք), կամ
- սկզբնական ճանաչման պահին Ընկերության կողմից նախատեսվում են որպես շահույթի կամ վճասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ։

Ընկերությունը ֆինանսական ակտիվները և պարտավորությունները նախատեսում է որպես շահույթի կամ վճասի միջոցով իրական արժեքով չափվող ստորև ներկայացված պայմաններից մեկը բավարարելու դեպքում։

- ակտիվները կամ պարտավորությունները կառավարվում, գնահատվում և ներկայացվում են իրական արժեքի հիմունքով,
- նախատեսումը վերացնում կամ եականորեն նվազեցնում է հաշվապահական անհամապատասխանությունները, որոնք կառաջանային այլ հանգամանքներում, կամ
- ակտիվը կամ պարտավորությունը ներառում է պարունակվող ածանցյալ գործիք, որը էականորեն ձևափոխում է դրամական միջոցների հոսքերը, որոնք այլապես կպահանջվեին պայմանագրի համաձայն։

Ֆինանսական գործիքների համապատասխան դասակարգումը դեկավարությունը որոշում է սկզբնական ճանաչման պահին։ Ածանցյալ ֆինանսական գործիքները և որպես շահույթի կամ վճասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ նախատեսված գործիքները սկզբնական ճանաչման պահին չեն վերլասակարգվում շահույթի կամ վճասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքների դասից։ Ֆինանսական ակտիվը, որը համապատասխանում է փոխառությունների և դերիտորական պարտքերի սահմանանը, կարող է վերադասակարգվել շահույթի կամ վճասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքների կամ վաճառքի համար մատչելի ֆինանսական գործիքների դասից, եթե Ընկերությունը մտադիր է և ի վիճակի է պահել այդ գործիքները մոտ ապագայում կամ մինչև մարման ժամկետը։ Այլ ֆինանսական գործիքները կարող են վերադասակարգվել շահույթի կամ վճասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքների դասից միայն հազվադեպ հանգամանքներում։ Հազվադեպ հանգամանքներն ի հայտ են զայիս եզակի արտաստվոր դեպքի արդյունքում, եթե զրեթե անհավանական է, որ այն կրկին տեղի կունենա մոտ ապագայում։

Տրամադրված փոխառությունները և դերիտորական պարտքերը ֆիքսված կամ որոշելի վճարումներով ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներն են, որոնք գնաճշված չեն գործող շուկայում, բացառությամբ այն գործիքների՝

- որոնց Ընկերությունը մտադիր է անմիջապես կամ կարճ ժամկետում վաճառել,
- որոնց Ընկերությունը սկզբնական ճանաչման պահին նախատեսում է որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող,
- որոնց Ընկերությունը սկզբնական ճանաչման պահին նախատեսում է որպես վաճառքի համար մատչելի, կամ
- որոնց գծով Ընկերությունը չի փոխառությունի իր բոլոր սկզբնական ներդրումները՝ վճարունակության անկարողությունից տարբեր այլ պատճառներով:

Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումները ֆիքսված կամ որոշելի վճարումներով և ֆիքսված մարման ժամկետով ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներն են, որոնք Ընկերությունը մտադրված է և հնարավորություն ունի պահել մինչև մարման ժամկետի լրանալը, բացառությամբ այն ներդրումների՝

- որոնց սկզբնական ճանաչման պահին Ընկերությունը նախատեսում է որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող,
- որոնց Ընկերությունը նախատեսում է որպես վաճառքի համար մատչելի, կամ
- որոնք հանապատասխանում են փոխառությունների և դերիտորական պարտքերի սահմանմանը:

Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներն իրենցից ներկայացնում են այնպիսի ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ, որոնք նախատեսված են որպես վաճառքի համար մատչելի կամ դասակարգված չեն որպես փոխառություններ և դերիտորական պարտքեր, մինչև մարման ժամկետը պահպան ներդրումներ կամ շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ:

(ii) Ճանաչում

Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները ճանաչվում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվորյունում, եթե Ընկերությունը դառնում է գործիքի պայմանագրային կողմէ: Ֆինանսական ակտիվների կանոնավոր կերպով գնումները հաշվառվում են վերջնահաշվարկի ամսաթվի դրությամբ:

(iii) Չափում

Ֆինանսական ակտիվի կամ պարտավորության սկզբնական չափումը տեղի է ունենում իրական արժեքով: Հանույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքների խմբում չդասակարգված ֆինանսական ակտիվի կամ պարտավորության դեպքում իրական արժեքին գումարվում են գործարքի հետ կապված ծախսումները, որոնք ուղղակիորեն վերագրելի են ֆինանսական ակտիվի կամ պարտավորության ձեռքբերմանը կամ թողարկմանը:

Սկզբնական ճանաչումից հետո ֆինանսական ակտիվները, ներառյալ ակտիվ համարվող ածանցյալ գործիքները, չափվում են իրական արժեքով՝ առանց նվազեցնելու գործարքի հետ կապված ծախսումները, որոնք կարող են առաջանալ դրանց վաճառքի կամ այլ օտարման հետ կապված, բացառությամբ՝

- փոխառությունների և դերիտորական պարտքերի, որոնք չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույթի մերուր,

- մինչև մարման ժամկետը պահպան ներդրումների, որոնք չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսաղբույրի մեթոդ, և
- բաժնային գործիքներում ներդրումների, որոնք գործող շուկայում չունեն գնաճշվող շուկայական գին, որոնց իրական արժեքները հնարավոր չեն արժանահավատորեն չափել և որոնք չափվում են սկզբնական արժեքով:

Բոլոր ֆինանսական պարտավորությունները չափվում են ամորտիզացված արժեքով, բացառությամբ այն ֆինանսական պարտավորությունների, որոնք նախատեսված են որպես շահույթի կամ վճարի միջոցով իրական արժեքով չափվող և այն ֆինանսական պարտավորությունների, որոնք առաջանում են, եթե իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվի փոխանցումը չի բավարարում ապահանաչման պահանջմերը:

(iv) Ամորտիզացված արժեք

Ֆինանսական ակտիվի կամ պարտավորության ամորտիզացված արժեքն իրենից ներկայացնում է այն գումարը, որով ֆինանսական ակտիվը կամ պարտավորությունը չափվում է սկզբնական ճանաչման պահին՝ հանած մայր գումարի վճարումները, գումարած կամ հանած սկզբնապես ճանաչված գումարի և մարման պահին գումարի տարրերության կուտակված ամորտիզացիան, որը հաշվարկվել է կիրառելով արդյունավետ տոկոսաղբույրի մեթոդ՝ հանած արժեքը կուտակվելու համապատասխան գործիքի հետ կապված սկզբնական ծախսումները, ընդգրկված են համապատասխան գործիքի հաշվեկշռային արժեքում և ամորտիզացվում են՝ կիրառելով գործիքի արդյունավետ տոկոսաղբույրի մեթոդը:

(v) Ֆինանսական ակտիվները կամ պարտավորությունները, որոնք սկզբնավորվել են շուկայական դրույքներից տարբեր դրույքներով, վերաշափվում են իրական արժեքով, որն իրենից ներկայացնում է տոկոսների ապագա վճարումները և մայր գումարի ապագա մարտումները՝ գեղչված նմանատիպ գործիքների համար գործող շուկայական տոկոսաղբույքներով: Տարբերությունը ճանաչվում է շահույթում կամ վճարում որպես օգուտ կամ վճար շուկայական դրույքներից տարբեր դրույքներով սկզբնավորված ֆինանսական գործիքների գծով: Հետազայտմ այս ակտիվների կամ պարտավորությունների հաշվեկշռային արժեքը ճշգրտվում է սկզբնավորման պահին օգուտի/վճարի մաշվածության չափով, և համապատասխան եկամուտը/վճարը ճանաչվում է տոկոսային եկամտի/ծախսի կազմում շահույթում կամ վճարում կիրառելով արդյունավետ տոկոսաղբույքի մեթոդը:

(vi) Իրական արժեքի չափման սկզբունքներ

Իրական արժեքն այն գիմն է, որը շուկայի մասնակիցների միջև սովորական գործարքում կստացվեր ակտիվի վաճառքից կամ կվճարվեր պարտավորության փոխանցման դիմաց չափման ամսարձի դրույթամբ հիմնական շուկայում կամ, վերջինիս բացակայության դեպքում, ամենաբարենպատ շուկայում, որին մուտքի հնարավորություն ունի Ընկերությունը նշված ամսարձի դրույթամբ: Պարտավորության իրական արժեքն արտացոլում է վերջինիս շկատարման ռիսկը:

Հնարավորության դեպքում, Ընկերությունը չափում է գործիքի իրական արժեքը՝ կիրառելով այդ գործիքի համար ակտիվ շուկայում գնաճշվող գները: Շուկան համարվում է ակտիվը, եթե ակտիվի կամ պարտավորության գծով գործարքները տեղի են ունենում բավարար հաճախականությամբ և բավարար ծավալով՝ շարունակական հիմունքով գնային տեղեկատվություն տրամադրելու համար:

Ակտիվ շուկայում գնանշվող գնի բացակայության դեպքում, Ընկերությունը կիրառում է գնահատման մեթոդներ՝ դիտարկելի տվյալների օգտագործումն առավելագույնի և ոչ դիտարկելի տվյալների օգտագործումը նվազագույնի հասցնելու նպատակով: Ընտրված գնահատման մեթոդը ներառում է բոլոր այն գործոնները, որոնք շուկայի մասնակիցները հաշվի կառնեին նման հանգամանքներում:

Սկզբնական ճանաչման պահին ֆինանսական գործիքի իրական արժեքի լավագույն ապացույցը ստորաբար գործարքի գինն է, այսինքն՝ տրված կամ ստացված հատուցման իրական արժեքը: Եթե Ընկերությունը որոշում է, որ սկզբնական ճանաչման պահին իրական արժեքը տարբերվում է գործարքի գինից, և իրական արժեքը չի հիմնավորվում ակտիվ շուկայում նմանատիպ ակտիվի կամ պարտավորության համար գնանշվող գնով կամ հիմնված չէ գնահատման այնպիսի մեթոդի վրա, որն օգտագործում է միայն դիտարկելի տվյալները, ապա ֆինանսական գործիքի սկզբնական չափումն իրականացվում է իրական արժեքով՝ ճշգրտված սկզբնական ճանաչման պահին իրական արժեքի և գործարքի գնի միջև տարբերության հետաձգումով: Հետագայում, տարբերությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում համապատասխան հիմունքով՝ գործիքի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում, սակայն ոչ ուշ այն պահից, եթե գնահատումն ամրողովին հիմնավորվում է շուկայի դիտարկելի տվյալներով կամ գործարքն ավարտվում է:

Իրական արժեքի հիերարխիայի մակարդակների միջև տեղի ունեցող փոխանցումներն ընկերությունը ճանաչում է այն հաշվետու ժամանակաշրջանի վերջում, որի ընթացքում տեղի են ունեցել փոփոխությունները:

(vii) Հետագա չափման հետևանքով առաջացած շահույթ և վնաս

Ֆինանսական ակտիվների կամ պարտավորությունների իրական արժեքի փոփոխությունից առաջացած շահույթը կամ վնասը ճանաչվում է հետևյալ կերպ:

- շահույթում կամ վնասում ճանաչվում է այն ֆինանսական գործիքի գծով շահույթը կամ վնասը, որը դասակարգված է որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող,
- վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների գծով շահույթը կամ վնասը ճանաչվում է սեփական կապիտալում որպես այլ համապարփակ ֆինանսական արդյունք (բացառությամբ արժեզրկումից կրուստների և վաճառքի համար մատչելի պարտքային ֆինանսական գործիքների գծով փոխարժեքային տարբերություններից առաջացած շահույթի և վնասի), մինչև որ նշված ակտիվն ապահանաչվում է և այդ պահին կուտակված շահույթը կամ վնասը, որը նախկինում ճանաչվել էր սեփական կապիտալում, ճանաչվում է շահույթում կամ վնասում: Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվի գծով տոկոսները ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույթի մեթոդը:

Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների և պարտավորությունների գծով շահույթը կամ վնասը ճանաչվում է շահույթում կամ վնասում, եթե ֆինանսական ակտիվը կամ պարտավորությունն ապահանաչվում է կամ արժեզրկվում է, ինչպես նաև՝ ամորտիզացիայի հաշվարկի ընթացքում:

(viii) Ապահանաչում

Ընկերությունն ապահանաչում է ֆինանսական ակտիվն այն դեպքում, եթե ֆինանսական ակտիվից առաջացող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները կորցնում են իրենց ուժը, կամ եթե փոխանցում է ֆինանսական ակտիվն այնպիսի գործարքում, որում փոխանցվում են ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված ըստ էության բոլոր դիմումները, կամ որում Ընկերությունը ոչ պահպանում, ոչ էլ փոխանցում է

Ֆինանսական ակտիվի նկատմամբ վերահսկողությունը: Ապահանաչման պայմանները բավարարող փոխանցված ֆինանսական ակտիվի գծով տոկոսները, որոնք առաջացել կամ պահպանվել են Ընկերության կողմից, ճանաչվում են որպես առանձին ակտիվ կամ պարտավորություն ֆինանսական վիճակի մասին հաշվետվորյունում: Ընկերությունն ապահանաչում է ֆինանսական պարտավորությունը, եթե պայմանագրային պարտականությունները կատարվում են, կամ չեղյալ են համարվում, կամ ուժը կորցնում են:

Ընկերությունը կատարում է գործարքներ, որոնցով փոխանցում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվորյունում ճանաչված ակտիվները, սակայն պահպանում է փոխանցված ակտիվների սեփականության հետ կապված բոլոր ռիսկերն ու հատույցները կամ դրանց մի մասը: Եթե ակտիվի սեփականության հետ կապված բոլոր կամ ըստ էության բոլոր ռիսկերն ու հատույցները պահպանվում են, ապա փոխանցված ակտիվները չեն ապահանաչվում:

Գործարքներում, որոնցում Ընկերությունը ոչ փոխանցում է, ոչ էլ պահպանում է ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները, այն ապահանաչում է ակտիվը, եթե կորցնում է դրա նկատմամբ վերահսկողությունը: Փոխանցումների այն գործարքներում, որոնցում Ընկերությունը պահպանում է ակտիվի նկատմամբ վերահսկողությունը, Ընկերությունը շարունակում է ճանաչել ֆինանսական ակտիվը այնքանով, որքանով շարունակվում է իր ներգրավվածությունը ֆինանսական ակտիվի մեջ, որն այն չափն է, որով նա ներարկված է փոխանցված ակտիվի արժեքի փոփոխությունների ազդեցությանը:

Եթե Ընկերությունը ձեռք է բերում իր սեփական պարտքը, ապա այն դուրս է բերվում ֆինանսական վիճակի մասին հաշվետվորյունից, և պարտավորության հաշվեկշռային արժեքի ու վճարված հատուցման տարբերությունը ներառվում է պարտքի ժամկետից շուտ մարման արդյունքում առաջացած շահույթում կամ վճառում:

Ընկերությունը դուրս է գրում անհավաքագրելի համարվող ակտիվները:

(ix) Հետզննման և հակադարձ հետզննման պայմանագրեր

Վաճառքի և հետզննման պայմանագրերով («ռեպո») վաճառված արժեքերը հաշվառվում են որպես գրավով ապահովված ֆինանսավորման գործարքներ, որի դեպքում արժեքերը բարեկարգություն ունենալու համար պահպանվում է դրա գործարքների գծով վճարվելիք գումարների կազմում՝ «ֆինանսական կազմակերպություններին վճարվելիք գումարներ» հոդվածում: Վաճառքի և հետզննման գների տարբերությունը դիտվում է որպես տոկոսային ծախս և ճանաչվում է շահույթում կամ վճառում ունեած պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում կիրառելով արդյունավետ տոկոսադրույթի մեթոդը:

Վերավաճառքի նպատակը հակադարձ հետզննման պայմանագրերով («հակադարձ ռեպո») ձեռք բերված արժեքերը գրանցվում են որպես հակադարձ հետզննման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ՝ «ֆինանսական կազմակերպություններից ստացվելիք գումարներ» հոդվածում: Զեռքբերման և վերավաճառքի գների տարբերությունը դիտվում է որպես տոկոսային եկամուտ և ճանաչվում է շահույթում կամ վճառում ունեած պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում կիրառելով արդյունավետ տոկոսադրույթի մեթոդը:

Եթե հակադարձ վաճառք նախատեսող պայմանագրի շրջանակներում գնված ակտիվները վաճառվում են երրորդ անձանց, ապա արժեքերը վերադարձնելու պարտավորությունն արտացոլվում է որպես առևտրական նպատակներով պահպող պարտավորություն և չափվում է իրական արժեքով:

(x) Հաշվանցում

Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները հաշվանցվում են՝ ֆինանսական վիճակի նախն հաշվետվորյունում ներկայացվելով գուտ գումարով, միայն այն դեպքում, եթե Ընկերությունն ունի ճանաչված գումարները հաշվանցելու ներկայումս իրազործելի իրավաբանորեն ամրագրված իրավունք, ինչպես նաև հաշվարկը գուտ հիմունքով իրականացնելու կամ միաժամանակ ակտիվն իրացնելու և պարտավորությունը մարելու մտադրություն:

(η) Հիմնական միջոցներ

(i) Սեփական ակտիվներ

Հիմնական միջոցների միավորները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները:

Եթե հիմնական միջոցի միավորը բաղկացած է օգտակար ծառայության տարբեր ժամկետ ունեցող խոշոր բաղկացուցիչներից, այդ բաղկացուցիչները հաշվառվում են որպես հիմնական միջոցների առանձին միավորներ:

(ii) Մաշվածություն

Մաշվածությունը ճանաչվում է շահույթում կամ վճարում՝ կիրառելով գծային մեթոդը առանձին ակտիվների օգտակար ծառայության ժամկետի ընթացքում։ Մաշվածության հաշվարկը սկսվում է հիմնական միջոցի ձեռք բերման պահից, իսկ սեփական ուժերով կառուցված ակտիվների դեպքում՝ վերջիններս կառուցումն ավարտելու և շահագործման հանձնելու պահից։ Հոյի գծով մաշվածություն չի հաշվարկվում։ Օգտակար ծառայության գնահատված ժամկետները հետևյալն են։

- | | |
|-------------------|--------|
| – սարքավորումներ | 3 տարի |
| – տնտեսական գույք | 5 տարի |
| – այլ | 5 տարի |

(ü) Արժեզրկում

Ցուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ Ընկերությունը գնահատում է, թե արդյոք առկա է անկողմնակալ վկայություն ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական ակտիվների խմբի արժեզրկված լինելու մասին։ Նման վկայության առկայության դեպքում, Ընկերությունը որոշում է արժեզրկումից կորստի գումարը։

Ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական ակտիվների խումբն արժեզրկվում է, և արժեզրկումից կորստատներ ճանաչվում են այն և միայն այն դեպքում, եթե առկա է անկողմնակալ վկայություն ֆինանսական ակտիվի սկզբնական ճանաչումից հետո տեղի ունեցած մեկ կամ ավելի դեպքերի արդյունք հանդիսացող արժեզրկման նասին (կորստի դեպք), և այդ դեպքը (կամ դեպքերը) ազդեցություն է ունեցել ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական ակտիվների խմբի գծով դրամական միջոցների գնահատված ապագա հոսքերի վրա, որոնք հնարավոր են արժանահավատորեն գնահատել։

Ֆինանսական ակտիվների արժեզրկման անկողմնակալ վկայությունը կարող է ներառել պարտավորությունների չկատարումը կամ վճարումների հետաձգումը փոխառուի կողմից, փոխառության պայմանագրի պայմանների խախտումները փոխառուի կողմից, ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական ակտիվների խմբի պայմանների այնպիսի մերականությունուն, որո Ընենությունն առ հաճախմանախներում չէ ու ուստանուի լուսն

թողարկողի սնանկացման հայտանիշները, արժեքրդի համար գործող շուկայի վերացումը, գրավի արժեքի նվազումը կամ ակտիվների խմբին վերաբերող այլ դիտարկելի տվյալները, ինչպիսիք են խմբի կազմի մեջ մտնող փոխառուների վճարունակության վատրարացումը, կամ տվյալ խմբի կազմի մեջ մտնող փոխառուների կողմից պարտականությունների չկատարման հետ փոխկապակցված տնտեսական պայմանների փոփոխությունը:

Բացի այդ, վաճառքի համար մատչելի բաժնային արժեքընթաց ներդրման իրական արժեքի՝ իր սկզբնական արժեքից նշանակալի կամ տևողական նվազումը նույնպես հանդիսանում է արժեգրկման անկողմնակալ վկայություն:

(i) Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ

Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվները հիմնականում ներառում են փոխառությունները և այլ դերհատորական պարտքերը («փոխառություններ և դերհատորական պարտքեր»): Ընկերությունը վերանայում է իր փոխառությունները և դերհատորական պարտքերը՝ արժեգրկման կանոնավոր հիմունքով գնահատելու նպատակով:

Ընկերությունը նախ գնահատում է, թե արդյոք գոյություն ունի արժեգրկման անկողմնակալ վկայություն այն առանձին փոխառությունների և դերհատորական պարտքերի գծով, որոնք առանձին վերցված նշանակալի են, և ապա առանձին կամ հավաքական հիմունքով՝ այն փոխառությունների և դերհատորական պարտքերի գծով, որոնք առանձին վերցված նշանակալի չեն: Եթե Ընկերությունը որոշում է, որ առանձին գնահատված փոխառության կամ դերհատորական պարտքի գծով՝ լինի այն նշանակալի կամ ոչ նշանակալի, արժեգրկման անկողմնակալ վկայություն չկա, ապա այն ներառում է այդ փոխառությունը կամ դերհատորական պարտքը պարտքային ռիսկի համանման բնութագրերով փոխառությունների և դերհատորական պարտքերի խմբում և դրանք հավաքական հիմունքով գնահատում արժեգրկման տեսանկյունից: Այն փոխառությունները և դերհատորական պարտքերը, որոնք առանձին են գնահատվում արժեգրկման տեսանկյունից, և որոնց գծով արժեգրկումից կորուստը ճանաչվում կամ շարունակվում է ճանաչվել, չեն ներառվում արժեգրկման հավաքական հիմունքով գնահատման մեջ:

Եթե առկա է փոխառության կամ դերհատորական պարտքի գծով արժեգրկումից կորստի անկողմնակալ վկայություն, ապա կորստի գումարը չափվում է որպես փոխառության կամ դերհատորական պարտքի հաշվեկշռային արժեքի և այդ փոխառության կամ դերհատորական պարտքի սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով գեղշված դրամական միջոցների ակնկալվող ապագա հոսքերի, ներառյալ երաշխիքների գծով ստացվելիք գումարների և գրավի ներկա արժեքի միջև տարրերությունը: Պայմանագրով նախատեսված դրամական միջոցների հոսքերը և նախկին փորձի վրա հիմնված վճարները, որոնց գծով ներկա տնտեսական պայմաններն արտացոլող դիտարկելի տվյալների հիման վրա կատարվել են ճշգրտումներ, հանդիսանում են դրամական միջոցների ակնկալվող հոսքերի գնահատման հիմք:

Որոշ դեպքերում դիտարկելի տվյալները, որոնք պահանջվում են փոխառության կամ դերհատորական պարտքի գծով արժեգրկումից կորստի չափը գնահատելու համար, կարող են լինել սահմանափակ կամ այլևս ոչ ամբողջությամբ առնչվող տվյալ հանգանաքներին: Դա կարող է տեղի ունենալ, եթե փոխառուն ֆինանսական դժվարությունների մեջ է, և համանման փոխառուների վերաբերյալ թիվ պատմական տվյալների կամ: Այդպիսի դեպքերում, ցանկացած արժեգրկումից կորստի չափը գնահատելու համար Ընկերությունն օգտագործում է իր փորձը և դատողությունները:

Փոխառությունների և դերհատորական պարտքերի գծով արժեգրկումից կորստ ճանաչվում են շահույթում կամ վճարում և հակադարձվում են այնքանով, որքանով փոխհատուցվող գումարի հետագա աճը կարելի է անկողմնակալորեն կապել արժեգրկումից կորստի ճանաչումից հետո տեղի ունեցած իրադարձությանը:

Այն դեպքերում, եթե փոխառության հավաքագրումը հնարավոր չէ, այն դրու է զրվում ի հաշիվ արժեգրկման գծով ձևափորված համապատասխան պահուատի: Ընկերությունը փոխառության մնացորդը (և արժեգրկման գծով ձևափորված ցանկացած պահուատը) դրու է զրում, եթե դեկավարությունը որոշում է, որ փոխառությունը ենթակա չէ հավաքագրման և ձեռնարկվել են փոխառության վերադարձի հետ կապված բոլոր անհրաժեշտ քայլերը:

(ii) Ոչ ֆինանսական ակտիվներ

Ցուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ այլ ոչ ֆինանսական ակտիվները, բացառությամբ հետաձգված հարկերի, գնահատվում են արժեգրկման հայտանիշ բացահայտելու նպատակով: Գուղքիլի փոխհատուցվող գումարը որոշվում գնահատվում է յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ: Ոչ ֆինանսական ակտիվների փոխհատուցվող գումարը որոշվում է որպես նրանց իրական արժեքից (հաճած վաճառքի ժախսերը) և օգտագործման արժեքից առավելագույնը:

Օգտագործման արժեքը գնահատելիս դրամական միջոցների գնահատված ապագա հոսքերը գեղշվում են իրենց ներկա արժեքով՝ օգտագործելով մինչև հարկումը գեղշման այն դրույքը, որն արտացոլում է ժամանակի մեջ դրամի արժեքի շուկայի ներկա գնահատականը և ակտիվին բնորոշ ռիսկերը: Այլ ակտիվներից առաջացող դրամական միջոցների ներհոսքից մեծապես անկախ և դրամական միջոցների ներհոսք չառաջացնող ակտիվների փոխհատուցվող գումարը որոշվում է այն դրամաստեղծ միավորի հանար, որին պատկանում է տվյալ ակտիվը: Արժեգրկումից կորուստը ճանաչվում է, եթե ակտիվի կամ նրա դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը զերազանցում է նրա փոխհատուցվող գումարը:

Ոչ ֆինանսական ակտիվների գծով արժեգրկումից կորուստը ճանաչվում է շահույթում կամ վնասում և հակադարձվում է միայն այն դեպքում, եթե փոխվել են փոխհատուցվող գումարը որոշելու համար օգտագործվող գնահատումները: Արժեգրկումից կորուստը հակադարձվում է միայն այն չափով, որ ակտիվի հաշվեկշռային արժեքը զգերազանցի այն հաշվեկշռային արժեքը, որը որոշված կլիներ՝ առանց համապատասխան մաշվածության և ամորտիզացիայի, եթե արժեգրկումից կորուստ ճանաչված չլիներ: Գուղքիլի գծով արժեգրկումի չ հակադարձվում:

(q) Պահուատներ

